

## ՊԱՏՄԱԿԱՆ

### Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ւ Ն

### Ա. Է Զ Մ Ի Ա Ժ Ն Ի Վ Ա Ր Դ Ա Պ Ե Տ Ա Ր Ա Ն Ի Ե Ւ Գ Ե Ո Ր Գ Ե Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն Ի

(Դ. ԳԱՐԻՑ ՄԵԽՉԵՆ ՄԵՐ ՕԲԵՐԲ.)

### Գ Լ Ո Ւ Ի Ւ Թ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ ՍԻՄԵՈՆ ԵՐԵՒԱՆՑՈՒ ՕՐՈՎ,

(1763 – 1780)

Ինչպէս նշեցինք, Յակոբ Դ. Զուզայեցու վախճանումից յիտոյ բակւում է անկրան մի չըջան, որը տեսում է համարեա՛ ութառն տարի: Վարդապետարանը ոչ միայն անշրանում է, այլ նաև բոլորովին մռացութեան է տրուում, անչուշտ վերադառնալով փորձուում սիստեմին՝ ձեռնառուներով աշխատանքը տառաջ տառելուն, կամ յայս դնելով ուրիշ վայրերում ծաղկող անապատների արտադրած սերունդի վրայ: Այս անվառունակ չըջանը փակող Յակոբ Ե Շամախեցի կաթողիկոսի օրով նկատելի են դպրոցական թոյլ ջանքեր, Վարդապետարանի գերատին կեանքի և նշանակութեան կոչուելու նրաններ: ԺԲ. Դարի Երեսնական թուականներին այդ վարդապետարանում սովորել է ուրիշների կարգին նաև Սիմէոն Երեւանցին, որը հետագայում կաթողիկոսական դահ բարձրանալով կիմիածնի Վարդապետարանում բացեց մի նոր ու փայլուն չըջան:

Միմէոն Երեւանցին Հայ Եկեղեցու մհծ դէմքերից է: Նրա դործունէութիւնը բարձրակողմանի է և լուրջ ուսումնասիրութեան տարրկայ դարձած շատերի կողմից: Մեր նիւթը թոյլ չի տալիս այդ ամէնը ընդուրեկելու: Անզրադառնում ենք միայն այն ամէնին, որ ուղղակի կապուած է կիմիածնի Վարդապետարանի նրա օրով կատարած աշխատանքներին:

Մինչեւ իր գահ բարձրանալը, նա հոչակուած էր իրեւ լաւ ուսուցիչ, քարոզիչ, վարչական և տնտեսական գեկավարման լաւ ֆիզ ունեցող ժարդ, որը լաւ գիտէր զործակիցներ ընտրել, նրանց պատրաստել և առաջ քաշել: Նա խելօք, եռանդուն ու համբերատար զործիչ էր: Իր տասնեօթամեայ կաթողիկոսական պաշտօնամարութեան ժամանակաշրջանը Հայ Եկեղեցու եւ ժողովրդի համար մի բարիք էր: Լէոն, Աղանեանը, Օրմանեանը սպառիչ կերպով եւ բազմակողմանի գրադուել են բազմարդիւն Հայրապետի դորձունէութեամբ:

Սիմէոն Երեւանցու ուսուցիչներն են Եղել Յակոբ և Յովոէփ վարդապետները: Առաջինը Յակոբ Ե Շամախեցի կաթողիկոսն է, որի ձեռնառունն ու յաջորդն է հանդիսանում Երեւանցին: Մի ձեռազրում առւում է, թէ Յա-

կոր վարդապետը Սիմէոնին նկատում է որպէս իր «յատուկ» և ձեռնասուն նոյն Յակոբայ հոգելոյս հայրապետի»<sup>(1)</sup>:

Նրա ուսանողական տարիների պատմութիւնը զեզազարդուած է Հը-  
րաշապատում զէպքերով, որոնք հասատում են այն ժիաբը, թէ երեւանցին  
ուժերի զերագոյն լարումով միայն կարողացել է «մարդ զառնալ»<sup>(2)</sup>:

Բնդունելով հոգեւորական կոչումը, Սիմէոն Երեւանցին չուտով  
դառնում է վաճրի աչքառու զէմքերից մէկը թէվ վարչական և թէ մանա-  
ւանդ ուսումնական հարցերում, այնպէս որ երբ կ. Պոլսի պատրիարք Յով-  
հաննէս կոլոտը կաթողիկոսից խողովում է Երեւանցւն ուզարկել իր ժօտ,  
կաթողիկոսը չի համաձայնում եւ պատասխանում է. «Շատ համարեցիք մի  
տղայ Սուրբ Աթոռի համար, որ նորան էլ ուզում էք հեռացնել այստեղից»<sup>(3)</sup>:

Պատանի հասակում Սիմէոն Երեւանցին աւարտելով իր ուսումը Մայր  
Աթոռի դպրոցում Արքահամ Մշեցու օրով, իր զիտելիքների և հեղ բնաւո-  
րութեան չնորհիւ անմիջապէս կարգում է նոյն դպրոցի ուսուցիչ և այդ  
օրուանից անուանում է բոլորի կողմէից «Սերտող Երեւանցի Սիմէոն»:

Օրմանեան Սրբադան քննարկելով ժամանակի պատմիչների վիտո-  
տարկումներն ու տուեալները այս հարցի մասին, եզրակացնում է.

«Սիմէոն իջմիածնի դպրոցի ընթացքը կ'աւարտէ, օգտուելով մանա-  
ւանդ Շամախեցիին ուսուցչութենէն, և անմիջապէս նոյն դպրոցի մէջ ու-  
սուցչութեան կը կոչուի, և առաջիկային նշանաւոր հանդիսացող Մայր Աթո-  
ռոյ միաբաններ, բոլորն ալ Սիմէոնի աշակերտած և Սիմէոնով դարդացու-  
ըլլալին պարծանօք կը յիշեն»<sup>(4)</sup>:

Երեւանցու ուսուցչական գործունէութիւնը կաթողիկոսարքանի վար-  
դապետարանում կարելի է բաժնել երկու՝ նախքան կաթողիկոսութեան ըրբ-  
ջան և կաթողիկոսական տարիները: Առաջինը կարճ է, բայց արդիանուէտ: Սիմէոնը  
որքան վարժ էր աստուածաբանական գիտութիւնների մէջ, նոյնքան  
էլ վարժ ու ձեռներէց էր հայկաբանութեան, շարադրութեան, երաժշտու-  
թեան, տրամարանութեան, բեմբասացութեան և քերթողութեան մէջ: Դա-  
սաւանդելիս, նա դիտէր զբաւել իր ունկնդիրներին ոչ միայն իր զիտելիքնե-  
րով, այլև իր անձով:

Իր հասցուցած նշանաւոր աշակերտներից կարելի է այստեղ յիշել  
Մինաս և Խսահակ աստուածաբան եպիսկոպոսներին, Յովուէփ արքեպիսկո-  
պոս Արդութեանին՝ համայն Ռուսաստանի առաջնորդ և ընտրէալ կաթողի-  
կոս, Հնդկաստանի յայտնի նույիրակներ՝ Փիլիպոս, Ղունկիան և Գրիգոր  
Եպիսկոպոսներին, Յովհաննէս վարդապետին, Դաւիթ և Դանիէլ կաթողի-  
կոսներին, Գալուստ Եպիսկոպոս Զուղայեցիին, Մատթէոս վարդապետ Կե-  
սարացիին, Թաղէոս, Գրիգոր Օշականցի սարկաւագներին:

Ուսուցչական այս լարուած ու բեղուն աշխատանքը բնդհատում է  
Ղազար Զահէկեցի կաթողիկոսի համանով, որով Սիմէոն Երեւանցին նշա-  
նակում էր հայրապետական նույիրակ: Այդ օրից սկսեալ Երեւանցին կրան-  
ւում է վարչական ընթացքի գործերով: Պարբերաբար իջմիածին գտնուելիս

(1) «Յուցակ Հայերէն Զեռագրաց Ներսիսեան Հոգեւոր Դոգրոցի», Տփիսիս, 1893, էջ 51:

(2) Ազանեան, «Դիւան...», Գ. էջ 42:

(3) Նոյնը, էջ 44:

(4) Օրմանեան, «Ազգապատում», Հայ. Բ, էջ 3021:

նա տոիթը չի կորցնում իր հոգուն Հարազատ Վարդապետարանում դասախոսելու համար։

Հաղիւ կաթողիկոսական գահը բարձրացած, Երեւանցին կջմիածին հրաւիրում է զանազան վանքերում որպէս զիտնական ուսուցիչ անուն հանած վարդապետներ և նրանց հետ համախորհուրդ և ձեռք ձեռքի ձևոնարկում է կտիլողիկոսարանի Վարդապետարանի բարձրացման աշխատանքին։ Թուենք մի քանիսը նրա հրաւիրած յայտնի ուսուցիչներից։ Յարութիւն վարդապետ Բատենցի, Սահակ Աշազին, ծեր Դափանցին, Ներսէս աւազը (Աշտարակեցի կտիլողիկոսի Հօրեղբայրը), Բարսեղ Կեսարացին, Պետրոս Բերդումեան-Աղամալեան և պիտիոպոսը եւայլն։

Էջօն այս վերջինի ժաման զրում է։ «Միմէսն կաթողիկոսի ժամանակ սպրում էր Պետրոս և պիտիոպոս Բերդումեան-Աղամալեանը, որ հոչակումծ էր իրբեւ զիտնական աստուածարան և կջմիածնի դպրոցի վառքն ու պարծանքն էր կազմում։ Ամկայն կենսազրական տեղեկութիւններ լուսաւորչական եկեղեցու այդ ասադի մասին մենք չունենք։ Յայտնի է միայն, որ նա նախիչեւանցի էր և ապրում էր Կ. Պոլոսւմ։ Աւնենք նաև նրա դրութիւնների ցուցակը, ուր կան տասնից աւելի տասուածարանական շարադրութիւններ։ «Մեկնութիւն գրոցն Ծննդոց», «Մեկնութիւն Ցորայ», «Մեկնութիւն Երգոց», «Մեկնութիւն Թղթոյն Պօլոսի առ Եփեսացիս», «Քարոզիրք տարեկան» (2 Հատորով), «Աղրիւր բացեալ յառակացն Քրիստոսի», «Ապաշխարան», «Գիրք աղօթից» (2 Հատորով), «Աստուածանմանութիւն», «Կշիռ արդարութեան», «Երգարան»։ Այս շարադրութիւններից մի քանիսը տպուած էն, բայց ոչ հեղինակի կենդանութեան ժամանակը<sup>(5)</sup>։

Պետրոս և պիտիոպոս Բերդումեան-Աղամալեանի բոլոր աշխատութիւնները այժմ պահպանում են Երեւանի Պետական Մատենադարանում և դրանցուած են թիւ 2956, 175, 6610, 2, 2718, 5337 և այլ ձեռագրերի համարների տակ։

Վերոյիշեալ ուսուցիչները Միմէսն Երեւանցու հեղինակութեամբ և պաշտպանութեամբ ոգեւորուած, շտառվ մեծ և չնորհակալ աշխատանք ծաւալեցին կջմիածնում։ Միմէսն Երեւանցու ուսումնական ճիզի մասին լրունք հենց իրեն։

«Սա էր այր չնորհընկալ, առատամիտ, զիտնաշատ և լի իմ իմաստութեամբ, լաւապէս տեղեակ Հին և Նոր Կտակարանաց, և վարժ նրբից և արտաքին դրոց, սնեալ և վարժեալ ի մանկութենէ ի ծոց Սրբոյ Աթոռոյ։ Սա ի սարկաւագութենէ անտի որքան յԱթոռս գտանիւր՝ ոչ զաղարիւր ի դասս ասելոյ, մինչեւ ի կաթողիկոսութեան եւս։ Անձանձիր և անտրոտունց, և մանաւանդ յորդորող և հրաւիրօց ի յուսումնասիրութիւն։ Այլ էր վարժ բանաստեղծութեան արհեստից, և համեղարան ի շարադրութիւնս, որ եւ ի սարկաւագութենէ անտի սա տայր զրագրաց Սրբոյ Աթոռոյ զմուսավատայս և կարգաւորէր զարհեստս նոցին որպէս յատկապէս հայր և մատակարար նոցին ի կաթողիկոսութեան եւս»<sup>(6)</sup>։

(5) ԱՅօ, «Պատմութիւն», Հատ. Գ, էջ 900։ Մանրեան, «Պատմութիւն կաթողիկոսացն էջմիածնի», Մասկուա, 1876, էջ 250։

(6) «Զամբո», Վաղարշապատ, 1873, էջ 33-34։

էլ աւելի սատարելու համար Մայր Աթոռում ծաւալուն շարժում դարձած կրթական գործին, Սիմէոն Երեւանցին Վաղարշապատում հիմնեց թղթի գործարան և տպարտն : Նրա հետաւոր նպատակն էր Վարդապետարանի գարդացման հետ կիմիածինը գտրձնել Հայքինի դրականութեան և Հայութեան ամենաուշագրաւ կեղրոնք չեւ մէկ անգամ բնորմիշտ փակել այն գործիների բերանը, որոնք Ամենայն Հայոց Հայրապետանոցը մեղագրում էին խաւարասիրութեան և ծուլութեան մէջ : Երեւանցին ծրագրում էր հասնել և անցնել Կ. Պոլում և Եւրոպայում զործող Հայագիտական գանագան կեղրոններին :

Յովհաննավանքից կիմիածին փոխադրուելուց յետոյ Վարդապետարանը տեղաւորուել էր մի բնդարձակ սենեուկում, որը այնքան էլ յորմար չէր ուսումնական նպատակների համար : Երեւանցին ձեռնարկեց մի նոր յինքով ապահովելու Վարդապետարանը, որը աւելի նպատակայարժար յինէր գլուցական կարիքներին : Նոր դպրոցի շինութեան մասին «Զամբռաւում կարդում ենք. «Ենինաց զմումատունն եւ զգպրատունն ձմռան և ամռան յատուի յատուի պարսոօք ի հիւսիսակողմն յետ կոյս խցից միարանիցն, յարմար բայ տեղույն և բայ շինուածոյն, որպէս տեսանես : Զի յառաջ դպրատունն ներպարապի միարանիցն էր անյարժար ըստ տեղույն և բայ կացութեան դպրոցն, նեղ և նսեմ»<sup>(7)</sup> :

ԺԹ Դարի 40ական թուականներին Շոհիաթունեան եպիսկոպոսը տեսել եւ նկարագրել է այս դպրոցը. «Սիմէոն կաթողիկոսի Երեւանցոյ որ հոգ տարեալ եւ այնմ՝ Լու կառուցանելի ի հիւսիսակողմն Տաճարին ի միջոցու երկուց պարապացն յորեւելու անդ մոմատոն՝ բաժանեալ ի նմանէ Հաւատուն որմով, եւ ժողովեալ անդը ըզմանկունու ժառանգաւորս Տաճարին՝ կարգեաց նոցա ուսուցիչս. ուրանոր շարունակեցաւ ուսումն եկեղեցական ընթերցուածոց եւ երաժշտութեանց, եւ ինչ ինչ արտաքին գասասացութեանց՝ բերականութեան, ճարտառանութեան եւ տրամարանութեան : Լինէր յայնժմ եւ ուսումն բարձրողոյն վարդապետական դիտութեանց՝ այն է, որական աստուածարանութեան եւ մեկնութեան սուրբ զրոց : Յայսմիկ ուսման վարդապետաց եւ սարկաւագաց վարժապետ յատկացեալ էր ականաւոր մեծանուն եպիսկոպոսն Պետրոս Բերդումեանց կամ Աղոմարեանց, Սահակ Եղիսկոպոս Գեղամացի՝ որ եւ քաղցրանուազ երաժիշտու»<sup>(8)</sup> :

Սիմէոն կաթողիկոսի Ս. կիմիածինի ժամանակի դպրոցի մասին խօսում է նաև Մաերեանը, եւ երախտագիտութեամբ յիշատակում, որ նայած Ս. կիմիածինը այդ ժամանակաշրջանում զանւում էր Պարսից բարրարուական տիրապետութեան ներքոյ, սակայն հոն դպրոցական զործունէութիւնը բնականոն շարունակում էր մինչեւ Սիմէոն կաթողիկոսի մահմանումը :

(7) «Զամբռա», էջ 35:

(8) Յովհաննես Եպոս. Ծահկարութեան, «Ասորագրութիւն եպիսկոպոսիկ կիմիածին Հինգ Պատմատառք», կիմիածին, 1842, էջ 120-121: